

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԾՁԲ-4-28**

ք. Երևան

19. 09 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 6 200 000 (վեց միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ ջրնդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ



ՎԱՃԱՌՈՂ

«Մովտի Մոթորս» ՍՊԸ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ, Երևան-Սևան
մայրուղու աջակողմյան հատված
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930040681470100
ՀՎՀՀ 02589075

ՏՆՕՐԵՆ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2019 թվականի ԳԱՀ մականիշի ավտոմեքենաների սպասարկման ծառայությունների

h/h	Ծառայության անվանումը	Վերանորոգումների առավելագույն գումարը ՀՀ դրամ			
1	ԳԱՀ-31	1 200 000			
2	ԳԱՀ-31 ինժ	3 000 000			
3	Գազել բոլոր տեսակի	2 000 000			
Ընդամենը՝		6 200 000			
Հ/հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Ավտոմեքենաներ			
		CPV	50111130/3/13/1	50111130/4/13/1	50111130/5/13/1
Անվանում		Չափ միավոր	ԳԱՀ-31 Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	ԳԱՀ-31 ինժ Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Գազել բոլոր տեսակի Մեկ միավորի գինը ՀՀ դրամ
1	Բունման համակարգի ստուգում	հատ	5000	5000	5000
2	Կցորդման համակարգի ստուգում	հատ	4000	4000	4000
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	հատ	2000	2000	2000
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	հատ	5000	5000	5000
5	Արգելական համակարգի աշխատանքի ստուգում	հատ	5000	5000	5000
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	հատ	5000	5000	5000
1. Շարժիչ					
7	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	35000	35000	45000
8	Շարժիչի քանդում արտավորում և հավաքում	հատ	65000	65000	65000
9	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	65000	65000	65000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	35000	35000	35000
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	հատ	150000	150000	150000
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկներով	հատ	15000	15000	15000
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	հատ	12000	12000	12000
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	հատ	12000	12000	12000
15	Փականների խցուկների փոխարինում	1 կ-տ	35000	35000	35000
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում	հատ	30000	30000	30000
17	Շարժիչի մխոցաօղորի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	1 կ-տ	65000	65000	65000
18	Ծնկաձև լիսեռի հղկում	հատ	12000	12000	12000
19	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	հատ	50000	50000	50000
20	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում	1 կ-տ	34000	34000	34000
21	Ծնկաձև լիսեռի առամնանիվի փոխարինում	հատ	6000	6000	6000
22	Ծնկաձև լիսեռի սղոցում	հատ	20000	20000	20000
23	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	6000	6000	6000
24	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	15000	15000	15000
25	Շարժիչի բլոկի փոխարինում	հատ	65000	65000	65000
26	Շարժիչի գլանի փոխարինում (гидрока)	հատ	30000	30000	30000
27	Մխոցի փոխարինում 1 հատ	հատ	12000	12000	12000
28	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	18000	18000	18000
29	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
30	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	հատ	0	0	0
31	Փոկանիվի փոխարինում	հատ	6000	6000	6000
32	Շարժիչի առամնավոր փոկի փոխարինում	հատ	0	0	0
33	Շարժիչի շղթայի փոխարինում	հատ	35000	35000	35000
34	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	հատ	6000	6000	6000
35	Շարժիչի քարտերի փոխարինում,	հատ	15000	15000	25000
36	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	հատ	15000	15000	25000
37	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	հատ	15000	15000	25000
38	Շարժիչի յուղի մոխի փոխարինում	հատ	18000	18000	25000
39	Շարժիչի յուղի մոխի նորոգում, մաքրում	հատ	6000	6000	6000
40	Շարժիչի յուղի մոխի մաքրում	հատ	6000	6000	6000
41	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	հատ	4000	4000	4000
42	Յուղի ծորակի փոխարինում	հատ	4000	4000	4000
43	Օդաքաշակ փողրակի փոխարինում	հատ	3000	3000	3000
44	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
45	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	հատ	3000	3000	3000
46	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	15000	15000	15000
47	Թափանիվի առանցքակալի փոխարինում	հատ	2000	2000	2000
48	Շարժիչի կափույրի փոխարինում	հատ	35000	35000	35000
49	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	հատ	35000	35000	35000
50	Շարժիչի շարժաթևի փոխարինում	հատ	6000	6000	6000

51	Մխոցային օդակների փոխարինում	1 կ-տ	65000	65000	65000
52	Ատամնանիվի փոխարինում	հատ	6000	6000	6000
53	Ատամնանիվի փոկի փոխարինում	հատ	0	0	0
54	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	հատ	0	0	0
55	Սովարիկ փոխարինում	1 կ-տ	3000	3000	3000
56	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	հատ	35000	35000	35000
57	Շարժիչի փոկի հորովակի փոխարինում	հատ	2000	2000	2000
58	Շարժիչի հորովակի առանցքակալի փոխարինում	հատ	2000	2000	2000
59	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	23000	23000	23000
60	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	հատ	2000	2000	2000
61	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	հատ	5000	5000	5000
62	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	հատ	2000	2000	2000
63	Շարժիչի գամասեղի փոխարինում	հատ	2000	2000	2000
64	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	հատ	2000	2000	2000
65	Գլխիկի հեղուցսի փոխարինում	հատ	25000	25000	25000
66	Ծնկածև լիսեղի հեղուցսի փոխարինում	հատ	4000	4000	4000
67	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	հատ	8000	8000	8000
68	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	հատ	15000	15000	15000
69	Շարժիչի քիմիական վազում	հատ	6000	6000	6000
70	Բաշխիչ լիսեղի նորոգում /վրանի տեղադրում/	հատ	30000	30000	30000
71	Ծնկածև լիսեղի կարգավորող տափուղակի տեղի նորոգում	1 կ-տ	5000	5000	5000
72	Կափուրների հղկում	հատ	2000	2000	2000
73	Կափուրի բնիկի նորոգում /գնեղոր/	հատ	6000	6000	6000
74	Պարագիտ լիսեղի հղկում և վրանի տեղադրում	հատ	10000	10000	10000
75	Շրջանակի ուղղում, նորոգում	հատ			
76	Ջսպանի թերթիկի փոխարինում	հատ	0	0	12000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
77	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	հատ	2000	2000	2000
78	Ավտոմեքենայի յուղում	հատ	3000	3000	3000
79	Համակարգչային ախտորոշում	հատ	5000	5000	5000
80	Յուղի ռադիատորի փոխարինում	հատ	15000	15000	15000
81	Յուղի ռադիատորի նորոգում	հատ	5000	5000	5000
82	Վառոցքի մոմի փոխարինում	1 կ-տ	2000	2000	2000
83	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	հատ	2000	2000	2000
84	Օդի գտիչի փոխարինում	հատ	1000	1000	1000
85	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	1000	1000	1000
86	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
87	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	հատ	2000	2000	2000
88	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում	հատ	5000	5000	5000
89	Կարբյուրատորի վերանորոգում	հատ	5000	5000	5000
90	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	1 կ-տ	10000	10000	10000
91	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	1 կ-տ	5000	5000	5000
92	Բոցամուղի կողմնորոգում	1 կ-տ	5000	5000	5000
93	Ինժեկտորի բոցամուղի խտրակների փոխարինում	1 կ-տ	0	0	0
94	Բենզամոդիչի փոխարինում	հատ	10000	10000	10000
95	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	հատ	0	0	0
96	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2500	2500	2500
97	Բռնկման կարգավորում	հատ	2500	2500	2500
98	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
99	Ղեկավարման բլոկի վերանորոգում	հատ	25000	25000	25000
100	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8000	8000	8000
101	Վառելիքի բաքի մաքրում	հատ	5000	5000	5000
102	Օդի ծախսի տվիչի փոխարինում	հատ	2000	2000	2000
103	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	հատ	2000	2000	2000
104	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	հատ	2000	2000	2000
105	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի փոխարինում	հատ	0	0	0
106	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի մաքրում	հատ	1000	1000	1000
107	Ցուղի ճնշման տվիչի փոխարինում	հատ	1000	1000	1000
108	Ցուղի ճնշման տվիչի փոխարինում	հատ	2000	2000	2000
109	Սվիչի փոխարինում	հատ	3000	3000	3000
110	Ալկախատորի փոխարինում կամ նորոգում	հատ	2000	2000	2000
111	Օդազտիչի իրանի փոխարինում	հատ	2000	2000	2000
112	Պաշտի ճուպանի փոխարինում կամ նորոգ.	հատ	3000	3000	3000
3. Մանեցման և արտածման համակարգ					
112	Հովհարի փոխարինում	հատ	5000	5000	5000
113	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2000	2000	2000
114	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8000	8000	8000

115	Ռադիատորի նորոգում	հատ	15000	15000	15000
116	Շերտափեղկի փոխարինում	հատ	3000	3000	3000
117	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	հատ	3000	3000	3000
118	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	հատ	2000	2000	2000
119	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	հատ	2000	2000	2000
120	Ջրի ծորակի փոխարինում	հատ	2500	2500	2500
121	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	հատ	2000	2000	2000
122	Հովարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	7000	7000	7000
123	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	հատ	15000	15000	15000
124	Վառարանի ռադիատորի նորոգում	հատ	3000	3000	3000
125	Վառարանի շարժիչի փոխարինում	հատ	15000	15000	15000
126	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	հատ	2500	2500	2500
127	Ջեռուցիչի իրանի փոխարինում	հատ	15000	15000	15000
128	Թերմոստատի փոխարինում	հատ	3000	3000	3000
129	Թերմոստատի միջադիրով	հատ	6000	6000	6000
130	Ջրի մղիչի փոխարինում	հատ	6000	6000	6000
131	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	հատ	2000	2000	2000
132	Գեներատորի փոկի փոխարինում	հատ	2000	2000	2000
133	Գեներատորի փոկի ձգող հողովակի փոխարինում	հատ	15000	15000	15000
134	Ջրի ռադիատորի վերանորոգում	հատ	3000	3000	3000
135	Թերմոստատի միջադիրի փոխարինում	հատ	3500	3500	3500
136	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3500	3500	3500
137	Խլարարի խողովակի փոխարինում	հատ	1000	1000	1000
138	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	հատ	1000	1000	1000
139	Խլարարի ներդիրի փոխարինում	հատ	2000	2000	2000
140	Խլարարի կախցի փոխարինում	հատ	1000	1000	1000
141	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	3000	3000	3000
141	Դիֆուզորի փոխարինում	հատ	5000	5000	5000

4. Կցորդում և ՓՏ:

142	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
143	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	հատ	2000	2000	2000
144	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	հատ	12000	12000	15000
145	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
146	Կցորդման ոտնակի կարգավորում	հատ	2000	2000	2000
147	Կցորդման ճուլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
148	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2000	2000	2000
149	Կցորդման երկժանի փոխարինում	հատ	2000	2000	2000
150	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	20000	20000	20000
151	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	հատ	20000	20000	20000
152	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	հատ	12000	12000	12000
153	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	հատ	4000	4000	4000
154	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	հատ	12000	12000	12000
155	ՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	20000	20000	20000
156	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	հատ	12000	12000	12000
157	ՓՏ-ի պատյանի փոխարինում	հատ	12000	12000	12000
158	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	հատ	12000	12000	12000
159	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	հատ	12000	12000	12000
160	ՓՏ-ի առամնանիվի փոխարինում	հատ	12000	12000	12000
161	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	12000	12000	12000
162	ՓՏ-ի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում	հատ	12000	12000	12000
163	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	հատ	12000	12000	12000
164	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	հատ	2000	2000	2000
165	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	հատ	3000	3000	3000
166	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	հատ	2000	2000	2000
167	ՓՏ-ի յուղի փոխարինում	հատ	1000	1000	1000
168	Վազբաջակի շարժարձի փոխարինում	հատ	2000	2000	2000
169	Փոխարկման մեխանիզմի կապրոնների փոխարինում	հատ	2000	2000	2000
170	Կցորդման եղանի փոշեխիլնոցի փոխար.	հատ	0	0	0
171	Կցորդման կարգավորում	հատ	0	0	0
172	Կցորդման ոտնակի կարգավորիչ տափողակների փոխարինում	հատ	3000	3000	3000
173	Կցորդման գլխավոր գլանի հեղուկի տարայի փոխարինում	հատ	2000	2000	2000
173	Փոխանցումը կարգավորող ձողի փոխար.	հատ	3000	3000	3000

5. Բաշխիչ տուվի կարողանային լիսեռ

174	Բաշխիչ տուվի հիմնական նորոգում	հատ	0	0	20000
175	Բաշխիչ տուվի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	15000
176	Բաշխիչ տուվի քանդում և արատավորում, հավաքում	հատ	0	0	20000
177	Բաշխիչ տուվի բարձր փոխանցման մեխանիզմի	հատ	0	0	10000

	փոխարինում				
178	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	հատ	0	0	10000
179	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	հատ	0	0	20000
180	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	հատ	0	0	0
181	Բաշխիչ տուփի առանցնային լիսեռի փոխարինում	հատ	0	0	0
182	Բաշխիչ տուփի երկմանի փոխարինում	հատ	0	0	0
183	Բաշխիչ տուփի բարձրիկի փոխարինում	հատ	0	0	0
184	Բաշխիչ տուփի խտարուկի փոխարինում	հատ	0	0	0
185	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	հատ	0	0	0
186	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2000	2000	2000
187	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	հատ	3000	3000	3000
188	Բաշխիչ լիսեռի առամնանիկի փոխարինում	հատ	0	0	0
189	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
190	Կարդանային լիսեռի միջ. կախցի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
191	Կարդանի հեղուցսի փոխարինում	հատ	2000	2000	2000
192	ԲՏ-ի ելուտի փոխարինում /Ֆլանեց/	հատ	0	0	0
193	ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում	հատ	0	0	0
194	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում	1 կ-տ	0	0	0
195	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում	1 կ-տ	0	0	0
196	ԲՏ-ի արգելակման աշխատանքային գլանի փոխարինում	հատ	0	0	0
6. Առջևի և հենակի կամրջակներ					
197	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	40000
198	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ոեղուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	հատ	0	0	15000
199	Առջևի կամրջակի կիսասնու հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
200	Առջևի կամրջակի կիսասնու առանցքակալի խտարուկերի փոխարինում	1 կ-տ	0	0	0
201	Կամրջակի լուղի փոխարինում	հատ	0	0	2000
202	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	15000
203	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	0	0	30000
204	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	24000	24000	40000
205	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	հատ	24000	24000	24000
206	Հետևի կամրջակի կիսասնու հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
207	Հետևի կամրջակի կիսասնու առանցքակալի փոխարինում	հատ	3000	3000	3000
208	Հետևի կամրջակի կիսասնու առանցքակալի խտարուկերի փոխարինում	1 կ-տ	3000	3000	3000
209	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	24000	24000	24000
210	Առջևի կիսասնուները միացնող ազույցի փոխարինում	հատ	0	0	0
211	Առջևի կամրջակի շրջադարձի բռունցքի փոխարինում	հատ	0	0	15000
212	Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակի փոխարինում	հատ	0	0	15000
213	Տանող կցաշարժի փոխարինում	հատ	3000	3000	3000
214	Սատռիլիտների հավաքման իրանի և սանիի փոխարինում	1 կ-տ	24000	24000	24000
7. Կախց					
214	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25000	25000	25000
215	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
216	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	6000	6000	10000
217	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	10000
218	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	10000
219	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	6000	6000	10000
220	Անվակունդի գամասեղի և հեղուկի փոխարինում(մեկ անիվի համար)	հատ	2000	2000	2000
221	Ձախ կամ աջ հողակալի խտարուկերի փոխարինում	հատ	0	0	0
222	Ձախ կամ աջ հողակալի նորոգում	հատ	0	0	0
223	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոցի փոխարինում	հատ	6000	6000	6000
224	Շկվորնու փոխարինում	հատ	0	0	30000
225	Ռեզբավորի փոխարինում	հատ	0	0	0
226	Ճոճանակային լծակի վռանի փոխարինում	1 կ-տ	2000	2000	2000
227	Ճոճանակային լծակի փոխարինում	հատ	5000	5000	5000
228	Ճոճանակային լծակի կալունակի փոխարինում	հատ	2000	2000	2000
229	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	0	0	0
230	Առջևի զսպանակի փոխարինում	հատ	6000	6000	6000

231	Աղջկի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	2000
232	Հարվածամեղմիչի վրանների փոխարինում	հատ	6000	6000	6000
233	Մեղմիչի ամրացման կայունակի փոխարինում	հատ	2000	2000	2000
234	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վրանի փոխարինում	հատ	3000	3000	3000
235	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5000	5000	5000
236	Ներքևի լծակի վրանների փոխարինում	1 կ-տ	6000	6000	6000
237	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	հատ	2000	2000	2000
238	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	հատ	2000	2000	2000
239	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4000	4000	4000
240	Վերևի լծակի վրանների փոխարինում	1 կ-տ	5000	5000	5000
241	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	հատ	2000	2000	2000
242	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	հատ	0	0	0
243	Գնդե հողակապի փոխարինում	հատ	0	0	0
244	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
245	Աղջկի կայունարարի վրանների փոխարինում	1 կ-տ	3000	3000	3000
246	Հետևի կայունարարի վրանների փոխարինում	հատ	4500	4500	4500
247	Կայունարարի կայունակի փոխարինում	հատ	2000	2000	2000
248	Հետևի զայանակների փոխարինում	հատ	5000	5000	5000
249	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
250	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0	0
251	Չապանի փոխարինում	հատ	6000	6000	6000
252	Չապանի վրանների փոխարինում	1 կ-տ	2000	2000	2000
253	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	հատ	4000	4000	4000
254	Հետևի հարվածամեղմիչի վրանների փոխարինում	1 կ-տ	2000	2000	2000
255	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում	1 կ-տ	0	0	0
256	Չապակի մետաղական վրանների փոխարինում	հատ	1000	1000	1000
257	Ստրումանի փոխարինում	հատ	2000	2000	2000
258	Չապանի ականջողի փոխարինում	հատ	2000	2000	2000
259	Չապանի ականջողի հեղույսի փոխարինում	հատ	2000	2000	2000
260	Չապանակի մեկուսացնող ռետինե միջադիրի փոխարինում	1 կ-տ	5000	5000	5000
261	Անվակունդի առանցքակայների բազակի կարգավորում	հատ	2000	2000	2000

8. Ղեկային մեխանիզմ

262	Ղեկայունակի (Մեխանիզմ) հիմնական նորոգում,	հատ	15000	15000	15000
263	Ղեկայունակի(Մեխանիզմ) արորիկի փոխարինում	հատ	15000	15000	15000
264	Ղեկայունակի(Մեխանիզմ) առանցքային ստնու փոխարինում	հատ	15000	15000	15000
265	Ղեկայունակի (Մեխանիզմ) խաչուկների փոխարինում	հատ	6000	6000	6000
266	Ղեկայունակի(Մեխանիզմ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	1 կ-տ	15000	15000	15000
267	Ղեկայունակի(Մեխանիզմ) քանդում, արատավորում, հավաքում	հատ	15000	15000	15000
268	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	հատ	2000	2000	2000
269	Ղեկայունակի պատյանի փոխարինում	հատ	15000	15000	15000
270	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	հատ	6000	6000	6000
271	Ղեկային մեխանիզմի ղեկայունակի ամրացման անտրի փոխարինում	հատ	2000	2000	2000
272	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	հատ	10000	10000	10000
273	Ղեկային կայունի ձգանների փոխարինում	հատ	2000	2000	2000
274	Ղեկային կայունի միջին ձգանի փոխարինում	հատ	3000	3000	3000
275	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	հատ	3000	3000	3000
276	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5000	5000	5000
277	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	հատ	0	0	0
278	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	հատ	15000	15000	15000
279	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2000	2000	2000
280	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	հատ	3000	3000	3000
281	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	հատ	2000	2000	2000
282	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	1 կ-տ	15000	15000	15000
283	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4000	4000	4000
284	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	հատ	5000	5000	5000
285	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4000	4000	4000
286	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
287	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	հատ	3000	3000	3000
288	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	հատ	2000	2000	2000
289	ՂԿ ձողի ելուստի փոխարինում /դուրսով/	հատ	8000	8000	8000
290	ՂԿ յուղի փոխարինում	հատ	2000	2000	2000

291	ԴԿ ձողի տեղաշարժի մեխանիզմի փոխարինում	հատ	8000	8000	8000
292	Հիդրոուժեղարարի լուսի տարայի փոխարինում	հատ	1000	1000	1000
293	Հիդրոուժեղ. լուսի տարայի խուփի փոխարինում	հատ	0	0	0
294	Արոհիկի և որդնակի առանցքների մեջ բացակների կարգավորում	հատ	2000	2000	2000
295	Հիդրոուժեղարարի փոկանիվի փոխարինում	հատ	2000	2000	2000
296	Աջ կամ ձախ ծգանի կարգավորիչ կցիչի փոխարինում	հատ	2000	2000	2000
297	ԴԿ ձայրակայի կցիչի փոխարինում	հատ	2000	2000	2000
9. Արգելակային համակարգ					
298	Վակումային ուժեղարարի փոխարինում	հատ	8000	8000	8000
299	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	հատ	2000	2000	2000
300	Վակումային ուժեղարարի նորոգում	հատ	8000	8000	8000
301	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	6000
302	Գլխ. գլանի հիմնական նորոգում, քոլոր աշխատանքների ընդգրկումով	հատ	3000	3000	3000
303	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
304	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	հատ	2000	2000	2000
305	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000	3000
306	Առջևի սուպպորտի վերանորոգում	հատ	2000	2000	2000
307	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	հատ	5000	5000	5000
308	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	հատ	3000	3000	3000
309	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	2000	2000	2000
310	Արգելակային կոճղակների փոխարինում	1 կ-տ	5000	5000	5000
311	Արգելակային համակարգի օդահանում	հատ	2000	2000	2000
312	Սկավառակային կոճղակների փոխարինում	1 կ-տ	4000	4000	4000
313	Թմբուկային կոճղակների փոխարինում	1 կ-տ	8000	8000	8000
314	Հետևի արգելակային թմբուկների փոխարինում	հատ	5000	5000	5000
315	Առջևի արգելակային թմբուկների փոխարինում	հատ	0	0	0
316	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	հատ	4000	4000	4000
317	Առջևի արգելակային սկավառակների հղկում	հատ	6000	6000	6000
318	Հետևի արգելակային թմբուկի հղկում	հատ	6000	6000	6000
319	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	6000
320	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	հատ	3000	3000	3000
321	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8000	8000	8000
322	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	հատ	1000	1000	1000
323	Հետևի արգելակների կարգավորում	հատ	2000	2000	2000
324	Արգելակային համակարգի վազում	հատ	2000	2000	2000
